

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

**Երևու հազար տասնինը թվականի փետրվարի հինգին
Երևան**

քաղաք

Բնապահպանական հանրային դատարանը՝ Նագելի Վարդանյան, Հրանուշ Խառատյան, Զարուհի Հովհաննիսյան, Ինգա Զարաֆյան կազմով

Քարտուղարությամբ՝ Վիկտորյա Բուռնազյանի

Մասնակցությամբ՝ «ԱԼՏ» հեռուստաընկերության տնօրեն Խաչիկ Դանիելյանի, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարինե Դանիելյանի, «Սպառողների խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի նախագահ Կարեն Զիլինգարյանի, «Հայ ձկնաբույծների միավորում» ՀԿ-ի նախագահ Արմեն Բունիաթյանի, Արարատի մարզի բնակիչ Հայկանուշ Հովհաննիսյանի, «Արմաշ» գյուղական համայնքների աջակցման և զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Տիգրան Մաթևոսյանի, Էներգետիկ փորձագետ Էդուարդ Արզումանյանի, «Հասարակական պաշտպանների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արամ Գրիգորյանի, ԷկոԼուրի փորձագետ Ռոզա Զուլհալյանի, Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Աշոտ Սարգսյանի:

Դիմումատու՝

Լևոն Գալստյան

Պատասխանողի ներկայացուցիչ / ներ՝
ներկայացել

պատշաճ ծանուցվել են, սակայն չեն

Դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով «Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների պաշարի հաշվեկշռի խախտման վերաբերյալ» բնապահպանական հանրային գործն՝ ըստ Լևոն Գալստյանի դիմումի,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների անխնա, չնորմավորված և անօրինական օգտագործման հետևանքով վերջին 10-15 տարիներին վտանգվել է ջրի պաշարների վերականգնման բնականոն հավասարակշռությունը: Այնտեղ առաջացել են ջրի առաջարկի-պահանջարկի անհամամասնություն: Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտի լիազորված մարմինների գործունեության անարդյունավետության և ամենաթողության արդյունքում ջրագրկվել է Արարատի և Արմավիրի մարզերի մոտ 30 համայնքների որոշ տարածքներ ճահճացել են, իսկ մոտ 4000 հա գյուղատնտեսական հողեր դարձրել են անօգտագործելի կամ անջրդի: Արմավիրի մարզում ստորերկրյա ջրերի հորիզոնների իջնելու հետևանքով փակվել են մոտ 40 ձկնային տնտեսություններ: Արմավիրի մարզում ջրային հորիզոնների իջեցման արդյունքում նախկին ինքնաշատրվանող 136 հորերից ներկայումս ջրօգտագործողները ջրառն իրականացնում են պոմպերով՝ դրա համար կատարելով հավելյալ էներգետիկ ծախսեր: Բարձրացել են ջրային ռեսուրսների հանքայնության աստիճանը՝ իջեցնելով հողերի բերքատվության մակարդակը: Ակնա լճի մակարդակի իջեցման հետևանքով Սև ջուր գետն արդեն իսկ չի սնուցվում լճից, պակասել է նաև սնուցումը ստորերկրյա աղբյուրներից: Գետի հոսքը ներկայումս կազմում է առավելագույնը 0.5իւ.մ/վրկ /1991-1992 թթ. այն կազմել է 20-22 իւ.մ/վրկ/, դրանով իսկ Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակության ՀԱԷԿ-ի հովացման համակարգի համար ստեղծելով լուրջ վտանգ: Ծագել են նշանակալի մարտահրավերներ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանման և օգտագործման ոլորտում:

Մեծ վնաս է պատճառվել Արարատյան դաշտավայրի կենսաբազմազանությանը, ինչը Ռամսարի և Բերնի կոնվենցիաների պահպանության օբյեկտ է:

2. Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը

Անհանգստացած լինելով մեր հայրենիքի բնական միջավայրի վիճակի և որակի մասին, ինչպես նաև նրանում կենսագործունեություն իրականացնող բնակիչների էկոլոգիական անվտանգության ու ապահովության բացակայությամբ, մանրամասն ուսումնասիրելով ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի աջակցությամբ 2014թ. մարտին Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի վիճակին վերաբերող «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Մել-Հով» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից հրապարակված [«Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատում»](#) ուսումնասիրությունը՝ հանգել են այն եզրակացության, որ ՀՀ պետական որոշ

կառույցներ և պաշտոնյաներ կատարել են այնպիսի գործողություններ և թույլ են տվել այնպիսի խախտումներ, որոնց համար նրանք պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության և վերականգնեն բնության հասցված վնասները: Այս խնդրի առնչությամբ դեռ 2015թ-ի հուլիս ամսին հանցագործության մասին հաղորդում եմ ներկայացրել այն ժամանակ ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին և Հատուկ քննչական ծառայության պետ Վահրամ Շահինյանին:

Խնդրի էությունը հետևյալն է.

Արարատյան դաշտի բնության կողմից շնորհված արտեզյան ջրերը բնության հետ ներդաշնակ գոյատևման աղբյուր և միջավայր են ապահովել մարդկանց և կենսաբազմազանության համար: 20-րդ դարում՝ դեռևս խորհրդային տարիներին, դրանք առաջին անգամ սկսել են օգտագործվել պետական ծրագրի հիման վրա: Այդ ժամանակ սահմանված է եղել այդ ջրերի այն թույլատրելի սահմանը, որի օգտագործման արդյունքում տեղի բնակչությունը ներդաշնակորեն կկարողանար ապրել բնության հետ՝ առանց վտանգելու Արարատյան արտեզյան ավազանի (հետագայում ԱԱԱ) ջրային պաշարները: Տասնյակ տարիներ շարունակ այդ ջրային պաշարները խմելու, կենցաղային, ոռոգման, արդյունաբերական, տեխնիկական և այլ նպատակներով ջուր են մատակարարել բնակչությանը և նպաստել էկոլոգիական, տնտեսական ու սոցիալական կայուն վիճակին:

Սակայն վերջին 10-15 տարիների ընթացքում Էջմիածնի և Մասիսի տարածաշրջաններում բացվել են խոշոր ձկնաբուծարաններ, որոնց գործունեության արդյունքում էապես գերազանցվել է ջրային պաշարների օգտագործման թույլատրելի սահմանը, վտանգվել է ստորերկրյա ջրերի բնականոն վիճակը, իսկ բնակչության համար՝ ստեղծվել սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ:

Դեռևս 1984 թվականին, տարբեր ջրաբանների հետազոտությունների արդյունքները հիմք ընդունելով, Պաշարների պետական հանձնաժողովը (ՊՊՀ) հաստատել էր խորքային հորերից ջուր վերցնելու տարեկան թույլատրելի սահմանը, որը կազմել էր 34,7 խմ/վրկ կամ 1,0943 մլրդ. խմ/տարի, ինչը պահպանելու դեպքում ջրային պաշարների գերշահագործում չէր նկատվի:

Սակայն, այս չափն էականորեն գերազանցող թվեր արձանագրվել են երեք տասնամյակ անց, և, համաձայն վերջին հետազոտությունների, 01.07.2013թ. դրությամբ ջրառը ԱԱԱ-ում կազմել է 55,6 խմ/վրկ կամ 1,7534 մլրդ. խմ/տարի, ինչը 1984թ. հաստատված 34,7

խմ/վրկ թույլատրելի միջին տարեկան ջրաքանակը գերազանցել է 20,9 խմ/վրկ կամ 659,1 մլն. խմ/տարով, այսինքն՝ 1,6 անգամ, որի 64%-ը բաժին է հասել հենց ձկնաբուծարաններին:

Հարկ ենք համարում ընդգծել, որ այդ ձկնաբուծական տնտեսությունների կողմից ջրառը կատարվել է և մինչ օրս շարունակվում է կատարվել լավային և լավատակ բարձրորակ ջրերի՝ խմելու ու կենցաղային ռազմավարական նշանակություն ունեցող ջրատար հորիզոններից, ինչը լրջագույն խնդիրներ է առաջացնում բնական միջավայրի և բնակչության համար:

Այս ամենի արդյունքում արձանագրվել է հետևյալը պատկերը.

1. Արարատյան արտեզյան ավազանի դրական ճնշում ունեցող ստորերկրյա ջրերի տարածքի մակերեսի կրճատում 3 անգամ՝ 32 760 հա-ից (1983թ.) մինչև 10 706 հա (2013թ.): Արդյունքում՝ 31 համայնք մասամբ կամ ամբողջությամբ զրկված է ինքնաշատրվանող հորատանցքերով ստացվող ռոռզման և խմելու ջրից:
2. Էջմիածնի տարածաշրջանի 303 ինքնաշատրվանող հորատանցքերի պիեզոմետրիկ մակարդակների նվազում և ելքերի կրճատում մինչև 10 անգամ: Խմելու-կենցաղային և/կամ ռոռզման նպատակով օգտագործվող 122 հոր շատրվանող չէ:
3. Մասիսի տարածաշրջանում մակարդակների նվազում 3,9-15 մետրով, ինչն էլ ուղեկցվում է ջրերի ծախսի 43,7-198 լ/վրկ նվազումով:
4. 1983-2013թթ. Սևջուր-Ակնալիճ աղբյուրների ելքերի կրճատում մոտ 6 անգամ: Վտանգվում է Մեծամորի ատոմակայանի աշխատանքն ու 29 համայնքների 8180 հա հողատարածքների ռոռզումը:
5. Ձկնաբուծության նպատակով հորատված 127 հորատանցք շատրվանող չէ:
6. Ջրի նվազող պահանջարկը բավարարելու նպատակով տարբեր տարիներին Սևանա լճից տարեկան 50-170 մլն. խմ ծավալով լրացուցիչ ջրի բացթողում, ինչը վտանգում է լճի էկոհամակարգը:
7. Արարատյան դաշտում մոտ 400 հազար գյուղացի կանգնած է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորության կորստի փաստի առաջ, ինչն էլ կառաջացնի ոչ միայն սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, այլ նաև կնպաստի արտագաղթի նոր ալիքի բարձրացմանը:

Իմ կարծիքով սա առանձնապես վտանգավոր և ծանր հանցագործություն է, որն իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության և այլ պետական կառույցների

բարձրաստիճան պաշտոնյաների թողտվությամբ և համաձայնությամբ, որոնք այդ տարիների ընթացքում տրամադրել են սահմանվածից ավելի ջրօգտագործման թույլտվություններ, չեն վերահսկել ջրառը Արարատյան դաշտում, ինչն էլ հենց պատճառ է հանդիսացել նշյալ տարածքում վերոնշյալ էկոլոգիական աղետալի վիճակի առաջացման համար:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից խմելու-կենցաղային, ոռոգման և արդյունաբերական նպատակներով 2013թ. դրությամբ ԱԱԱ-ում տրամադրված է եղել 1571 հորատանցքերով ջրօգտագործման թույլտվություն (հետագայում ՋԹ):

Ընդ որում, 2008-2013թթ. ՋԹ-ներ են տրամադրվել 274 նոր հորատանցքի համար 23,3 խմ/վրկ կամ 734.8 մլն. խմ/տարի գումարային ծախսով: Այդ ՋԹ-ները տրամադրելուց հաշվի չեն առնվել 2006-2007թթ. գույքագրման արդյունքները, որոնց համաձայն 2008թ. դրությամբ ԱԱԱ-ում ստորերկրյա ջրերի 36,5 խմ/վրկ կամ 1,1511 մլրդ. խմ/տարի ծավալով օգտագործումն արդեն իսկ գերազանցում էր 1984թ. ՊՊՀ կողմից հորատանցքերով սահմանված 34,7 խմ/վրկ կամ 1,0943 մլրդ. խմ/տարի թույլատրելի միջին տարեկան ջրառը: Այսինքն, ՀՀ բնապահպանության նախարարությունը իրավունք չունի նոր ջրօգտագործման թույլտվություններ տրամադրելու, սակայն բոլորիս հասկանալի պատճառներով գնացել է այդ քայլին և կորստյան եզրին կանգնեցրել ԱԱԱ-ի ստորերկրյա ջրերը (բոլոր տվյալները վերցված են հաղորդման սկզբում նշված ուսումնասիրությունից):

Վերոշարադրյալից ելնելով՝ ակնհայտ երևում է, որ կատարվել է ՀՀ Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով սահմանված առանձնապես ծանր հանցագործություններ, որոնց չբացահայտման և չկանխման դեպքում Հայաստանին սպառնում է էկոլոգիական և հասարակական աղետ, այդ իսկ պատճառով դիմել են ՀՀ դատախազությանն ու Հատուկ քննչական ծառայությանը՝ պահանջելով հետևյալը.

- **Հարուցել քրեական գործ Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրային պաշարներից 2008-2013թթ. ընթացքում սահմանվածից ավելի ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման փաստի առթիվ, ինչը, մեր կարծիքով, նաև իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով, որի արդյունքում անդառնալի էկոլոգիական վնաս է հասցվել բնական միջավայրին, և վտանգվել է Հայաստանի բնության և բնակչության մի սովոր գանգվածի անվտանգությունը:**

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ԱԱԱ-ի խնդրով դեռ 2013թ-ին քրեական գործ է հարուցվել, սակայն, ըստ իմ ունեցած տեղեկությունների, ոչ մի պաշտոնատար անձ այդպես էլ պատասխանատվության չի ենթարկվել: Ես համոզված եմ, որ իրավական պետությունում և պետական ծառայողների օրինապաշտ աշխատելաճի պարագայում մենք չէինք ունենա եկոլոգիական այս աղետալի վիճակը, ինչն ունենք այսօր: Պարզ է, որ այս ստեղծված ամենաթողության և անպատժելիության մթնոլորտում, մեղավորներին պատասխանատվության չկանչելու և չպատժելու, իրավիճակը չվերահսկելու պարագայում, բացասական հետևանքներն ու նմանատիպ հանցագործությունները հետզհետե ավելանալու են: Եթե գործուն քայլեր չձեռնարկվեն իրավապահ մարմինների կողմից, ապա Հայաստանը շուտով կհայտնվի եկոլոգիական արտակարգ դրության մեջ:

Նշեմ, որ իմ այս 2015թ-ի հաղորդումը ՀՀ գլխավոր դատախազությունն ուղարկել էր Արարատի մարզի դատախազություն, ինչը միացվել էր հենց վերոնշյալ քրեական գործին: Մինչև 2018թ-ի մայիս ամիսն այդպես էլ չստանալով իմ հաղորդման հետ կապված այլ պատասխան՝ ես կրկին [նիմեցի](#) ՀՀ գլխավոր դատախազին: Պատասխանից պարզվեց, որ դեռ 2016թ-ի դեկտեմբերի 26-ին որոշում է կայացվել Արարատի մարզային քննչական վարչությունում քննվող 27124313 քրեական գործը կարճելու և քրեական հետապնդում չիրականացվելու մասին, և, որ այդ որոշումն այն ժամանակ, իբր թե, փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նաև մեզ, սակայն դա հաստատող կտրոնը չի պահպանվել: Ինձ ուղարկել էին նաև այդ որոշումը, որին ծանոթանալով ինձ համար ակնհայտ է դառնում, որ 2015թ. հուլիսին հանցագործության մասին իմ ուղարկած հաղորդման մեջ ներկայացված փաստերը ոչ միայն պատշաճ չեն քննվել, այլ ուղղակի անտեսվել են ավագ քննիչ Ն. Ս. Այվազյանի կողմից:

Ես [բողոքարկեցի](#) քննիչի այդ որոշումը՝ պահանջելով ուսումնասիրել դրա իրավաչափությունն ու քննել իմ հաղորդման մեջ ներկայացված փաստերը: 2018 թ-ի հունիսի 15-ին ստացած [պատասխանից](#) պարզվեց, որ իմ բողոքը բավարարվել է և 2016թ-ի դեկտեմբերին կարճված քրեական գործը վերաբացվել է ու նախաքննություն կատարելու համար կրկին ուղարկվել է Արարատի մարզային քննչական վարչություն: Այդ որոշումն ստանալուց անցել է արդեն ութ ամիս, սակայն ես այս պահին չունեմ ոչ մի տեղեկություն, թե ինչ փուլում է գտնվում այդ քրեական գործը, և ինչ գործողություններ են արվել իմ հաղորդման մեջ նշված փաստերի վերաբերյալ:

Դիմելով Հանրային եկոլոգիական դատարան, հուսով եմ, որ ձեր կողմից կիրականացվի լրիվ, օբյեկտիվ և անաչառ քննություն, և միջոցներ կձեռնարկվեն օրինախախտ պաշտոնյաներին՝ թե՛ ներկայիս, թե՛ նախկին, քրեական պատասխանատվության

ենթարկելու և ՀՀ հասցված էկոլոգիական և տնտեսական վնասները վերականգնելու ուղղությամբ:

3. Պատասխանողի փաստարկները և իրավական դիրքորոշումը - չեն ներկայացվել դատական նիստին դրանց ներկայացուցիչների չներկայանալու պատճառով

4. Տուժողների վկայությունները

- **Խաչիկ Դանիելյան** - Ակնա լճի անկման պատճառով ամբողջովին ցամաքել է Սև ջուր գետը: Այն, ինչ տեսնում եք, ոչ թե Սևջուր գետն է, այլ Արմավիր քաղաքի կոյուղաջրերն են: Բացակայում է վերահսկողությունը հորատանցքերի փորման նկատմամբ, ինչի արդյունքում ջրօգտագործման թույլտվություններով ստացված ջրաքանակները և փաստացի հոսքերը էականորեն տարբերվում են իրարից:
- **Կարինե Դանիելյան** - Արարատյան ջրավազանի ջրազրկումն իր հետ բերել է ամբողջ Հանրապետության ջրային ռեսուրսների նվազման, քանի որ ջրային համակարգը փոխկապակցված է և հանդիսանում է ընդհանուր համակարգ: 2008 թ-ին, երբ Հայաստանում դեռևս նոր էր զարգանում ձկնաբուծությունը, արդեն իսկ արձանագրվել էին ջրառի գերազանցումներ: Սակայն կառավարությունը, հակառակ դրան, որոշեց զարգացնել ձկնաբուծությունը: Փորձագետները և ժողովուրդն անհանգստացած են Արարատյան ավազանի խնդրով: Ես առաջարկում եմ դիմել նաև ՀՀ ազգային անվտանգության խորհրդին, քանի որ դա մեր անվտանգության խնդիրն է:
- **Կարեն Զիլինգարյան** - Կառավարության կողմից ձկնաբուծությունը գերակա ուղղություն հայտարարելուց հետո ձկնաբուծության բիզնեսի դրական ազդեցությունն իրենց վրա զգացել են բիզնեսամենները, այլ ոչ թե հասարակությունը: Հասարակությունը դրանից չի շահել:
- **Արմեն Բունիաթյան** – Ինչպե՞ս ստացվեց, որ մի ընկերություն լուծարվում է, և բանկը, 4 տարի չունենալով ջրօգտագործման թույլտվություն, շարունակում է աշխատացնել ձկնաբուծարանը, մինչդեռ մեզ՝ իսկական ձկնաբույծներիս համար, մեծ խնդիր է ջրօգտագործման թույլտվության անգամ մեկ ամսվա ուշացումը: Օլիգարխները ձկնաբույծներ չեն, նրանք փորձել են մոնոպոլիզացնել այս ոլորտը: Ես, որպես «Հայ ձկնաբույծների միավորում» ՀԿ-ի նախագահ, խնդրում եմ՝ մեզ չկապել մի քանի օլիգարխների հետ: Մենք՝ ինքներս, պայքարում ենք նրանց դեմ: Օրինակ, ես ունեցել եմ 850 լիտր/վրկ ջրառի թույլտվություն, հետո այն կրճատել եմ մինչև 500 լիտր/վրկ: Իսկ ի՞նչ իրավունքով բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը «Յունիֆիշին»-ին տրամադրեց 7000 լիտր/վրկ թույլտվություն: Բնապահպանության

նախարարությունն իրավունք չունի Մասիսի տարածքում նման մեծ ջրառի թույլտվություն տրամադրել, քանի որ այնտեղ քաղցրահամ ջրերի մակարդակը 80 մետրի վրա է, իսկ Արմավիրի մարզում՝ 150 մետրի: Այսինքն, ջրի ճնշումը Մասիսում շատ բարձր է:

- **Հայկանուշ Հովհաննիսյան** - Ձկնաբուծարանները պետք է ստուգվեն, քանի որ նրանց մի մասը կառուցված են այն տեղերում, որտեղ ծանր մետաղների մեծ պարունակություններ կան:
- **Տիգրան Մաթևոսյան** - Ես չեմ տեսել, որ Արարատյան արտեզյան ջրերն ինչ-որ մոնիտորինգի ենթարկվեն, ստուգվի դրանց որակը:
- **Էդուարդ Արզումանյան** - Արարատյան ավազանի ջրերի պակասը բերում է ջերմոցային գազերի արտանետումների ավելացմանը: Հայկական ատոմակայանը, որպեսզի հովացման ջուր ստանա, մայիս-սեպտեմբեր ամիսներին չի աշխատում, էներգիայի պակասը լրացնում է ՋԷԿ-ը, ինչը նպաստում է ջերմոցային գազերի արտանետումներին: Եթե մենք ունենայինք Արարատյան ջրերի նկատմամբ հսկողական օրգան, այս վիճակում չէինք հայտնվի:
- **Արամ Գրիգորյան** – Կուզենայի, որ այստեղ լինեք պատասխանող կողմ, որպեսզի հանրությունը հասկանա՝ ով է կոնկրետ պատասխանողը: Դատարանը պետք է պարզաբանումներ պահանջի կառավարությունից:
- **Աշոտ Սարգսյան** - 2016 թ-ին ՀՀ նախագահի կողմից հրահանգ է եղել կրճատել ջրօգտագործման ծավալները: 2017 թ-ին ՀՀ վարչապետի 413-Ն որոշման համաձայն մշակվել է միջոցառումների ծրագիր Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների խնայման ու խորքային հորերի հնարավորինս կոնսերվացման համար: Իսկ մոտ 10 օր առաջ ՀՀ կառավարության աշխատակազմից Արարատի և Արմավիրի մարզպետարաններ, էներգետիկ ենթակառուցվածքների ու բնական պաշարների և բնապահպանության նախարարություններին ուղարկվել է գրություն Արարատյան դաշտի արտեզյան ջրային ռեսուրսների առկա վիճակի վերլուծություն և վերականգնման ծրագրերի նախագիծ կազմելու վերաբերյալ:

5. Դատավորների ելույթները

- **Հրանուշ Խառատյան** - Որքան հայտնի է, չի վերլուծվել ռոռգման ջրի նվազման հետևանքով գյուղացիական բնակչության կրած սոցիալական կորուստները՝ ինչքան գյուղատնտեսական հողեր են զրկվել մշակման հնարավորությունից և ինչքան գյուղացիական տնտեսություններ՝ բերք և եկամուտ ստանալու հնարավորությունից:

Չմշակվող հողերը մի կողմից մնում են գյուղացիների համար որպես անշարժ գույք, և նրանք վճարում են գույքահարկ: Մյուս կողմից, այդ նույն բնակչությունը, եկամտի աղբյուրից գրկվելով, իրականում սոցիալական բեռ է դառնում: Այդ մարդիկ նույնիսկ գուրկ են սոցիալական նպաստից, քանի որ անշարժ գույքի սեփականատեր են համարվում: Հայտնի չէ, թե որքանով է ավելանում պետական բյուջեից նոր առաջացող կարիքավոր խավերի սոցիալական կարիքները ծածկելու հնարավորությունը: Պարզ է, որ նրանց կյանքի որակը էապես փոխվում է. նրանք և նրանց երեխաները կարող են անհրաժեշտ որակյալ սնունդ չունենալ, նրանք գրկվում են կրթությունը շարունակելու, որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություններից, իսկ իրենց սեփական հողերի վրա չաշխատելով և եկամուտ չստանալով, նաև սեփական վաստակով կյանքի հեռանկարներ կառուցելու հնարավորությունից: Սա մեզ համար թե՛ նյութական ռեսուրսի՝ հողի կորուստ է, թե՛ մարդկային ռեսուրսի՝ չխոսելով արդեն պարզ արդարության մասին: Փորձենք հաշվել, թե քանի մարդ է շահում և քանիսը տուժում ձկնաբուծարանների պատճառով: Միայն թե պետական կորուստները հաշվենք ոչ միայն տվյալ պահին բյուջե մտնող հարկերով, այլ նաև մարդկային հնարավորությունների փոշիացման՝ առկա և ապագա հետևանքներով:

- **Զարուհի Հովհաննիսյան** – Արդյո՞ք ներկայիս կառավարությունն այլ էկոգիտակցության կրող է, քան նախկինը, և կարո՞ղ է քննել այդ գործերը կամ վերանայել: Արդյո՞ք եղել են հանդիպումներ, քննարկումներ նոր կառավարության ներկայացուցիչների հետ: Ժամանակին շատ խոսվեց անցումային արդարադատության մասին, այժմ, կարծես թե, լռել են, բայց արդյո՞ք դիտարկում են նմանատիպ գործերը փաստահավաք խմբերի ակտիվ մասնակցությամբ վերանայելու, գնահատական տալու և հանրային համերաշխությունը վերականգնելու ուղղությամբ: Արդյո՞ք այս գործերին գնահատական տալուց հետո հնարավոր է ազդել հանրության էկոգիտակցության վրա, որպեսզի ավելի ակտիվ լինի հանրությունը և բոլոր բնապահպանական խնդիրներին ավելի ակտիվ արձագանքի:

6. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հետևյալն են.

- Արարատյան հարթավայրում ստորերկրյա ջրային ռեսուրսներն օգտագործում են՝ ա) ձկնաբուծության նպատակով – 168 տնտեսություն (576 հատ խորքային հոր՝ 1362,3 մլն.մ³.խմ ծավալ թույլվությամբ):
բ) ոռոգման նպատակով – 16 ՋՕԸ (890 հորատանցք 186,1 մլն.մ³):

զ) կումունալ – կենցաղային, ոռոգման նպատակով – 62 համայնքներ

դ) կումունալ – կենցաղային նպատակով- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ (78 հատ` 74.73 մլն.խմ),

դ) արտադրական նպատակով – 60 արդյունաբերական կազմակերպություններ (92 հատ խորքային հոր) (հիմք` ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն ներկայացրած «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» եռամսյակային հաշվետվություններ, 2 տա-ջուր (տարեկան) հաշվետվություններ)

- Արարատյան հարթավայրում փաստացի գործում է 168 ձկնաբուծական տնտեսություններ, որից`
Արարատի մարզում – 102 հատ
Արմավիրի մարզում – 66 հատ
- **ՀՀ բնապահպանության նախարարությունը տվել է.**
- 2016—2019թթ. ձկնաբուծությամբ զբաղվելու համար 51 խորքային հորից 89,98 մլն. մ³ ընդհանուր ծավալով ջրօգտագործման թույլտվություն, այդ թվում նաև ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարացում, որից 8 հորից «Էկո-Ֆիշ Թրեյդ» ՍՊԸ-ին հատկացրել է 17,66 մ³/տարեկան (զ. Ձորակ) ծավալ, իսկ «Սամվել Լարլաջյան» ԱԶ-ին 4 հոր` 16,08 մլն. մ³/տարի:
- 2017-2020թթ. - ձկնաբուծությամբ զբաղվելու համար 62 խորքային հորից 151,27 մլն. մ³ ընդհանուր ծավալով ջրօգտագործման թույլտվություն, որից 20 հորից «Էկո-Ֆիշ Թրեյդ» ՍՊԸ-ին հատկացրել է 60,61 մլն մ³/տարի (զ. Սայաթ Նովա), իսկ «Բնտեր-Ա.Կ.Վ.Ա.» ՍՊԸ-ին` 6 հոր 31,788 մլն. մ³/տարի ծավալով:
- 2018-2021թթ. - ձկնաբուծությամբ զբաղվելու համար 73 խորքային հորից 125,18 մլն. մ³ ընդհանուր ծավալով ջրօգտագործման թույլտվություն, որից «Վանկաֆիշ» ՍՊԸ-ին հատկացրել է 8,89 մլն. մ³/տարի, «Էմմի - ֆիշ» ՍՊԸ-ին` 8,89մլն. մ³, «Մխչյան- ֆիշ» ՍՊԸ-ին` 9,12 մլն. մ³ (հիմք` <http://www.mnp.am/am/pages/187>)
- Ձկնաբուծության նպատակով հորատված 127 հորատանցք շատրվանող չէ:
- Արարատյան արտեզյան ավազանի դրական ճնշում ունեցող ստորերկրյա ջրերի տարածքի մակերեսը կրճատվել է 3 անգամ` 32 760 հա-ից (1983թ.) մինչև 10 706 հա (2013թ.): Արդյունքում 31 համայնք մասամբ կամ ամբողջությամբ զրկված է ինքնաշատրվանող հորատանցքերով ստացվող ոռոգման և խմելու ջրից:
- Էջմիածնի տարածաշրջանի 303 ինքնաշատրվանող հորատանցքերի պիեզոմետրիկ մակարդակները նվազել են և ելքերը կրճատվելմինչև 10 անգամ: Խմելու-կենցաղային և/կամ ոռոգման նպատակով օգտագործվող 122 հոր ավստաշատրվանող չէ:

- Մասիսի տարածաշրջանում մակարդակները նվազել են 3,9-15 մետրով, ինչն էլ ուղեկցվում է ջրերի ծախսի 43,7-198 լ/վրկ նվազումով:
- 1983-2013թթ. Սևջուր-Ակնալիճ աղբյուրների էլքերը կրճատվել են մոտ 6 անգամ: Վտանգվում է Մեծամորի ատոմակայանի աշխատանքն ու 29 համայնքների 8180 հա հողատարածքների ոռոգումը:
- Ջրի պահանջարկը բավարարելու նպատակով 2008, 2012, 2014, 2017, 2018 թվականներին Սևանա լճից Օրենքով սահմանված չափաքանակը գերազանցող ծավալով լրացուցիչ ջուր է բաց թողնվել, ինչն առաջացրել է բացասական հաշվեկշիռ և վտանգել է Սևանա լճի էկոհամակարգը:
- Արարատյան դաշտում մոտ 400 հազար գյուղացու գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը վտանգված է, ինչն էլ կառաջացնի սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ:
- Վնասվել են Ռամսարի կոնվենցիայով պահպանվող ջրածահճային հանդակները և թռչունների և այլ կենդանիների բնակատեղին:
- Վնասվել են Բեռնի կոնվենցիայով պահպանվող էմերալդ գոտիները:
- Առաջացել է գյուղատնտեսական հողերի աղակալում և անապատացում:

7. Դատարանի իրավական վերլուծությունը

Ջրային ոլորտի կարգավորման ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության ոլորտն ապահովված է համապատասխան դրույթներով և կատարված են լիազորությունների հստակ տարանջատում: Ստեղծված իրավիճակի համար պատասխանատվությունը կիսում են ինչպես ՀՀ պետական մարմինները, այնպես էլ ջրօգտագործող ընկերությունները, իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Այսպես, ՀՀ օրենսդրության համաձայն **ՀՀ Կառավարությունը պարտավոր էր՝**

1.Իրականացնել տվյալ ջրային ռեսուրսի որակի, քանակի, ձևի և բաշխվածության ամբողջական գույքագրում և վերագնահատում՝ առնվազն 5 տարվա պարբերականությամբ՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի և դրանից բխող իրավական ակտերի պահանջներին համապատասխան /հիմք՝ «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /2005թ/ 9-րդ հոդված/:

2.Կատարել ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև ըստ առաջնահերթության և գերակա օրենքով սահմանված ուղղությունների՝ ջրային ռեսուրսների պահպանության և կայուն կառավարման նպատակով ընդհանուր առաջարկի և պահանջարկի գնահատումից ստացված արդյունքների հիման վրա, (հիմք՝

«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /2005թ/ օրենքի 13-րդ հոդված):

3. Սահմանել վերականգնվող (բնական) ստորերկրյա ջրային ռեսուրսների, ազգային ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների և ռազմավարական պաշարի մեծությունները (հիմք՝ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխի, 4-րդ հոդվածի, 2-րդ (երկարաժամկետ՝ 2015-2021թթ. միջոցառումների ծրագրի իրականացում) կետ:

ՀՀ ջրային օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն ՀՀ ջրի ազգային խորհուրդը՝

«1) քննարկումներ է կազմակերպում ջրային ռեսուրսների տնօրինման, տիրապետման և օգտագործման բնագավառում ծագած հարցերի շուրջ,

2) առաջարկություններ է ներկայացնում կառավարություն՝ ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և դրանցում առաջարկվող փոփոխությունների նախագծերի, ջրային հարաբերություններին առնչվող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի, ջրի ազգային ծրագրի կատարման տարեկան հաղորդումների, Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության բնագավառում պետական կառավարման մարմինների գործողություններում առաջացող տարաձայնությունների վերաբերյալ,

3) տալիս է եզրակացություն՝

- ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման նպատակով և Արարատյան դաշտում ստորերկրյա ջրերից ջրօգտագործման թույլտվություններ տալու վերաբերյալ»:

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության լիազորություններն են (ՀՀ Ջրային օրենսգրքի 10-րդ հոդված)՝

«1) համակարգում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման աշխատանքները.

2) ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի սահմաններում իրականացնում է ջրային ռեսուրսների կառավարումը և պահպանությունը.

3) մշակում է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման էկոլոգիատնտեսական հիմնավորման սկզբունքները և նորմերը.

4) դասակարգում է ջրային ռեսուրսներն ըստ օգտագործման գործառնության և կարգավիճակի.

5) մասնակցում է ջրերի ստանդարտների մշակմանը և վերահսկում է դրանց կիրառումը.

6) ջրի ազգային ծրագրի համաձայն սահմանում է ջրային ռեսուրսների սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի ու էկոլոգիական նվազագույն ելքերը և հաստատում է կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական և քանակական չափանիշները.

7) հաստատում է մակերևութային և ստորերկրյա ջրառի սահմանային մեծությունները.

8) ապահովում է ջրավազանային կառավարման պլանների մշակումը և դրանց իրականացումը.

9) իր հաստատած կանոնակարգի համաձայն՝ լիազորված անձանց միջոցով ստանում է ջրօգտագործման թույլտվության հայտերը.

10) տալիս է ջրօգտագործման թույլտվությունները.

11) հաստատում է ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների նորմատիվները.

12) կազմակերպում է ջրային ռեսուրսների մոնիտորինգի իրականացումը.

13) ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում ապահովում է միասնական գիտատեխնիկական պետական քաղաքականության իրականացումը, կազմակերպում է բնագավառի հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների կատարման և արդյունքների ներդրման գործընթացը.

14) համակարգում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման հարցերին առնչվող ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

15) բացահայտում է ջրհավաք ավազանների հյուծման սպառնալիքները և մշակում է միջոցառումներ՝ ջրային էկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունները կանխելու համար.

16) կառավարության հաստատած կարգին համապատասխան ապահովում է իր կողմից մշակված փաստաթղթերի հրապարակայնությունը և հասարակայնության ծանուցումը.

17) սահմանում է ստորերկրյա ջրերի արտոնյալ օգտագործման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ ջրառի սահմանային ծավալի չափը՝ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի համար.

18) ապահովում է ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների քարտեզների մշակումը.

19) ջրի ազգային ծրագրի պահանջների համաձայն՝ վերահսկողություն է իրականացնում ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության բնագավառում

սահմանված նորմերի՝ չափաքանակների և սահմանափակումների կատարման նկատմամբ.

20) «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրում է ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք.

21) ջրավազանային կառավարման պլանի բացակայության դեպքում Արարատյան դաշտի հորատանցքերի հորատմամբ ջրօգտագործման թույլտվությունները տալիս է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում.

22) մշակում և հաստատում է ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան»:

Սույն գործի քննության ընթացքում ներկայացված փաստերը հիմնավորում են, որ **ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը** չի դասակարգել Արարատյան դաշտի խորքային ջրերն ըստ օգտագործվող գործառույթի և կարգավիճակի /ՀՀ ջրային օրենսգրքի 10-րդ հոդ., 4-րդ կետ/, չի սահմանել ստորերկրյա ջրառի սահմանային մեծությունները /ՀՀ ջրային օրենսգրքի, 10-րդ հոդ., 4-րդ կետ/, ինչը առաջացրել է ջրային ռեսուրսի գերօգտագործում և պատճառվել է էկոլոգիական վնաս:

ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ **ջրային համակարգերի կառավարման մարմինը՝ Ջրային կոմիտեն՝**

«1) պատասխանատու է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման համար.

2) մասնակցում է ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման աշխատանքներին.

3) ապահովում է ջրի ազգային ծրագրի իրականացումը.

4) մասնակցում է օգտագործելի ջրային ռեսուրսների պահանջարկի հաշվարկման ամենամյա և հեռանկարային աշխատանքներին.

5) ապահովում է օգտագործելի ջրային ռեսուրսների վերաբաշխման աշխատանքների իրականացումը.

6) մասնակցում է ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակման աշխատանքներին և ապահովում է դրանց իրականացումը, ինչպես նաև կազմակերպում է ներդրումային ծրագրերի փորձաքննությունը.

7) օրենքով նախատեսված դեպքերում կատարում է ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման պետական հիմնարկների կառավարման լիազորությունները.

8) ապահովում է ջրային համակարգերի վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի նախնական փորձաքննություն և ներկայացնում է առաջարկություններ.

9) կառավարության հաստատած կարգով կարգավորում և վերահսկում է ՀՏԿ-ների օգտագործման անվտանգությունը.

10) վերահսկում է ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերում աշխատանքների կազմակերպումը.

11) կառավարության կողմից նախատեսված լինելու դեպքում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպություններում ապահովում է պետության բաժնեմասի կառավարման հետ կապված գործառույթները, ներառյալ՝ պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի արդյունավետ կառավարման պայմանագրերի կնքումը և օրենքով սահմանված պահանջների կատարման վերահսկողությունը.

12) մասնակցում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև այլ ջրային համակարգերում կորուստների նորմատիվների մշակմանը.

13) մասնակցում է Կարգավորող հանձնաժողովին սակագների վերաբերյալ ներկայացվող առաջարկությունների քննարկմանը.

14) մասնակցում է Կարգավորող հանձնաժողովին ներկայացվող առաջարկությունների քննարկմանը՝ լիցենզիաների և դրանցում ներառվող պայմանների վերաբերյալ.

15) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան՝ իրականացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարչական վարույթ.

16) սահմանում է ջրային հողերի ու դրանց ջրակոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումներ և նորմեր.

17) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ներդնում է համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվություններ (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) և դրանց միջոցով հավաքված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարում է վարչական վիճակագրական ռեգիստրներ»:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդ. Համաձայն՝ Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի (նախկինում՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության) կողմից ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում վերահսկում է՝

«ա) ջրային ռեսուրսների ինքնակամ և ոչ նպատակային օգտագործման սահմանափակումների պահպանումը,

բ) ջրօգտագործման թույլտվություն և ազատ ջրօգտագործում պահանջող ջրօգտագործման իրականացման պահանջների կատարումը,

գ) սահմանված չափաքանակներից ավել ջրային ռեսուրսներն աղտոտելու և ջրահավաք ավազաններում ջրային ռեժիմի սահմանափակումների պահպանումը,

դ) ջրային ռեսուրսների պետական հաշվառման վարման կանոնների պահպանումը,

ե) ջրային ռեսուրսների վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբյուրների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրման պահանջների կատարումը,

զ) ջրային ռեսուրսների վիճակի վրա ազդող աշխատանքների կատարման համար սահմանված պահանջների կատարումը,

է) հանգստի և սպորտի համար ջրային ռեսուրսներից օգտվելու սահմանված պահանջների կատարումը,

ը) ջրի ազգային ծրագրով սահմանված ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նորմերի՝ չափաքանակների ու սահմանափակումների կատարումը.

3) հողերի պահպանություն՝

ա) հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանումն ու բնապահպանական միջոցառումների կատարումը»:

Սույն գործի քննության ընթացքում հիմնավորվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը 2009–2017թթ. չի իրականացրել պատշաճ և համալիր վերահսկողություն Արարատյան արտեզյան ավազանից ջրառ իրականացնող կազմակերպություններում: Պատճառներից հիմնականն այն է, որ ՀՀ կառավարությունը 2015թ. հունիսի 30-ի N-839-Ա, 2016թ. հունվարի 14-ի 43-Ա, 2016թ. հունիսի 9-ի 597-Ա, 2017թ. հունվարի 26-ի N-46-Ա որոշումներով կասեցրել և սահմանափակել է տեսչական բոլոր տիպի ստուգումները: Արդյունքում ջրօգտագործողները դուրս են մնացել պետական վերահսկողությունից, և իրենց գործունեությունը ծավալել են՝ հիմնականում օրենսդրական պահանջներն խախտելով:

Սակայն, այդ տարիներին ջրօգտագործողների մոտ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն

կատարած մասնակի ստուգումների արդյունքում հայտնաբերվել են բնապահպանական օրենսդրության բազմաթիվ խախտումներ՝ հիմնականում ՀՀ ջրային և ՀՀ հողային օրենսգրքերի պահանջների, մասնավորապես՝

- Միայն 2014-2015թթ. ջրային ոլորտում կատարած ստուգումներով պարզվել է, որ ջրերի ապօրինի օգտագործման արդյունքում շրջակա միջավայրին պատճառվել է 67.0 մլն. դրամ գումարի վնաս:
- Ոռոգման ընդամենը մեկ համակարգում կատարված ուսումնասիրություններով արձանագրվել են թվով 308 ապօրինի (չհաշվառված) ջրառի ելքեր՝ որից 117 փոքր հզորությամբ պոմպ, տարբեր տրամաչափի 167 սիֆոն, դերիվացիոն ջրանցքների հատակից ու կողային պատերից 24 անցք և փականային ջրթողներ: Չի բացառվում, որ նույն իրավիճակն է տիրում նաև մյուս համակարգերում, ինչը հնարավոր է պարզել դրանց մոտ ստուգումների իրականացման պարագայում:
- Որոշ ՋՕԸ-ներում, մասնավորապես «Մասիս» ՋՕԸ-ում 2015թ. կատարված ստուգման արդյունքով պարզվել է, որ ընկերության կողմից օգտագործվող 132 հորատանցքերից 95-ը ինքնաշատրվանող են: Այդ հորատանցքերը ոռոգման ժամանակահատվածի ավարտից հետո չեն բերվել փականային ռեժիմի (այսինքն, տեղի է ունեցել ջրի աննպատակ ջրահոսք): Միաժամանակ, այդ ջրերը ներհոսել են դրենաժային համակարգ և բարձրացրել գրունտային ջրերի մակարդակը: Դա հանգեցրել է հողային պաշարների աղակալմանը և գերխոնավացմանը: Այսինքն, տեղի է ունեցել ջրի աննպատակ հոսք և միաժամանակ հողային ռեսուրսներին հասցվել զգալի տնտեսական վնաս: Ընկերությունում արձանագրվել է նաև ոռոգման ժամանակահատվածում ջրառի և սպառողներին ջրի բաշխման սահմանված չափաքանակների չհաշվառման զանգվածային երևույթ: Արձանագրվել են նաև ջրօգտագործման թույլտվությամբ տրված ոչ նպատակային ջրօգտագործման փաստեր Արարատի մարզի Հովտաշատ, Նորամարգ, Սայաթ-Նովա, Միս համայնքներում. ինքնաշատրվանվող հորատանցքերից մատակարարվել է նաև ջուր կոմունալ-կենցաղային և խմելու նպատակներով: Այսինքն, խախտվել է ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջները /Ջուրը պետք է վերցվի և օգտագործվի միայն ջրօգտագործման թույլտվության մեջ նշված ծավալով և նպատակով/: «Մասիս» ՋՕԸ-ում կատարված ստուգման արդյունքով արձանագրված բոլոր խախտումները բնորոշ են նաև մնացած բոլոր ՋՕԸ-երին: «Ջրվեժ-Չորաղբյուր» ՋՕԸ-ն Սևանա լճից ոռոգման նպատակով վերցված ջուրը տեխնոլոգիական նպատակով տրամադրել է այլ կազմակերպության:

Արձանագրվել են ՋԹ-ով տրված ջրօգտագործման ծավալների գերազանցումներ՝ «Սևջուր-Ախթամար» ՋՕԸ՝ 1.18 մլն խմ, «Արաքս» ՋՕԸ՝ 5.1 մլն.խմ, «Մասիս» ՋՕԸ՝ 95 հատ հորերից ոռոգման սեզոնից դուրս ջրառ:

Փաստաթղթային ուսումնասիրությունների և կատարած վերահսկողության վերլուծությունները ցույց են տալիս, որ Ջրօգտագործող ընկերությունների մոտ առկա են հետևյալ ընդհանուր բնապահպանական խախտումները՝

1. Ջրառի փաստացի ծավալների հաշվառման բացակայություն
2. Արդյունահանված ջրի ոչնպատակային օգտագործում
3. Ոռոգման սեզոնի ավարտից դուրս խորքային հորերի փականային ռեժիմի չկիրառում
4. ՋԹ-ով տրված ջրածավալների գերազանցումներ
5. Հաշվետվողականության բացակայություն («Ջրօգտագործման մասին» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություններ)
6. Ոռոգման համակարգերից անօրինական ջրօգտագործման իրականացում
7. Փաստացի օգտագործվող և ՋԹ-ներով հատկացված հորերի քանակական տարբերություններ:

- «Հայջրմուղկոյուղի» և «Երևան ջուր» ՓԲԸ-ներում (ներկայումս «Վեոլիա Ջուր» ՓԲԸ) մասնակի՝ Արարատյան դաշտի խորքային հորերից ջրառի օրենսդրական պահանջների նկատմամբ կատարված ստուգումների արդյունքներով արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- «Հայջրմուղկոյուղի» ընկերությանը տրամադրած հորերից 7 խորքային հորի խմելու-քաղցրահամ որակի ջուրը համայնքների և ձկնաբույծների կողմից օգտագործվել են ձկնատնտեսական նպատակով,

- 1 հորից (400լ/վրկ ջրթողունակությամբ) ջուրն աննպատակ թափվել է դրենաժային համակարգ,

- Ընկերության կողմից չեն չափվել ջրառի ծավալները, ջրակորուստների կանխարգելմանն ուղղված միջոցառումների ծրագիրն օրենքով սահմանված կարգով չի համաձայնեցվել նախարարության հետ,

- Ընկերությունը չունի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների բարելավմանն ու աղտոտման կանխարգելմանն ուղղված ծրագիր,

- «Երևան ջուր» ՓԲԸ-ում (ներկայումս «Վեոլիա Ջուր» ՓԲԸ) արձանագրվել է նաև ոռոգման սեզոնին «Մասիս» ՋՕԸ-ի կողմից ընկերության ջրհեռացման համակարգի

կոյուղաջրերով ոռոգման իրականացման երևույթ, ինչը, բացի լուրջ բնապահպանական խնդիրներից, հանգեցրել է նաև բնակչության բողոքի և սոցիալական լարվածության:

- «Նոր Ակունք» ՓԲԸ-ում (ներկայումս «Վեոլիա Ջուր» ՓԲԸ) կատարված կամերալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընկերությունում տարիներ շարունակ ստուգումների չիրականացման արդյունքում չեն վերահսկվում ընկերության կողմից օգտագործվող ջրի ծավալը, արտահոսքի ջրի ծավալները, արտահոսքում վտանգավոր նյութերի բաղադրությունները, ինչի արդյունքում շրջակա միջավայրին հասցվել է զգալի վնաս:

- Փաստաթղթային ուսումնասիրությունների և կատարած վերահսկողության վերլուծությունները ցույց են տվել, որ ձկնաբուծական տնտեսությունների մոտ առկա են հետևյալ ընդհանուր բնապահպանական խախտումները`
- Չեն իրականացվում ջրառի փաստացի ծավալների հաշվառում (Չնայած նրան, որ ձկնաբուծարանների 80%-ն ապահովված են ջրաչափական սարքավորումներով, նրանց 70%-ը չեն աշխատում)
- Արդյունահանված ջուրը նպատակային չի օգտագործվում («Յունիֆիշ» ՍՊԸ, «Արմենիաֆիշ» ՍՊԸ, «Հովհաննես Հովհաննիսյան» ա/ձ, «Նորայր Ենոքյան» ա/ձ...)
- Ձկնաբուծարանների օգտագործած ջրերի թափման վայրերը չեն համապատասխանում ՋԹ-ի պայմաններին (թափվում են դրենաժային համակարգ)
- ՀՀ կառավարության 2014 թվականի 1111-Ն որոշմամբ սահմանված ջրառի պոմպերի կապարակնիքները բացակայում են:

Նշված իրավախախտումները հանգեցրել են Արարատյան արտեզյան ջրավազանի ջրի մակարդակի կտրուկ իջեցման /ջրի մակարդակը իջել է 15մ/, Արարատյան դաշտի հողերի աղակալման, գյուղատնտեսական հողերի և համայնքների ջրազրկման, Սևանա լճի էկոհավասակշռության խախտմանը և պատճառվել է էական էկոլոգիական վնաս, չեն կատարվել միջազգային կոնվենցիաններով Հայաստանի հանրապետության ստանձնած պարտավորությունները, ինչի համար որևէ պաշտոնատար անձ, ով օրենքի կոպիտ խախտումներով տվել է ջրօգտագործման համապատասխան թույլտվություններ, պատասխանատվության չի ենթարկվել, և պատճառված տնտեսական և էկոլոգիական վնասը չի վերականգնվել:

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

ՎՃՌԵՑ

1. Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրային պաշարների գերսպառումը, ինչը հանգեցրել է բնապահպանական աղետի, ճանաչել որպես բնապահպանական հանցագործություն:
2. Ստեղծված իրավիճակի համար պատասխանատու ճանաչել այն պաշտոնատար անձանց, ում ստորագրություններով տրվել են ջրօգտագործման թույլտվություններ, որոնք առաջացրել են էկոհամակարգային հավասարակշռության խախտում և ջրային ռեսուրսի գերնորմատիվային սպառում, մակերևութային և ստորերկրյա ջրերի քանակությունների նվազում և որակի վատթարացում:

3. Դիմել ՀՀ Դատախազություն՝

- Արարատյան արտեզյան ջրավազանի ջրի օգտագործման անօրինական թույլտվություններ տված պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործերի հարուցման և նրանց գործողությունների հետևանքով պետությանը և քաղաքացիներին պատճառած վնասների վերականգնման պահանջով:

4. Դիմել ՀՀ Վարչապետին՝ խնդրելով հանձնարարել հետևյալ գերատեսչություններին՝

ա) ՀՀ բնապահպանության նախարարությանը.

- չկատարել ջրերի բաշխում, եթե այն վնաս է հասցնում ազգային ջրային պաշարին /«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդ. 2-րդ մաս /:
- Դասակարգել Արարատյան դաշտի խորքային ջրերն ըստ օգտագործվող գործառնության և կարգավիճակի /ՀՀ Ջրային օրենսգիրք, 10-րդ հոդ., 4-րդ մաս/
- Մշակել Արարատյան հարթավայրում շրջանառու կամ կրկնակի ջրօգտագործման համակարգի անցման միջոցառումների ծրագիր և ժամանակացույց (ըստ տարիների սկսելով խոշոր ջրօգտագործողներից (300 լ/վրկ և ավելի ջրօգտագործում) չեղյալ համարել թույլտվություն ունեցող, սակայն դեռևս չհորատված խորքային հորերի հորատման թույլտվությունները:
- Կոնսերվացնել կամ լիկվիդացնել առկա տիրագուրկ հորերը:

- Վերանայել ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի քանակները՝ դրանք համապատասխանեցնելով փաստացի ձկան քանակության նորմատիվ պահանջներին:
- Մշակել և ներդնել ձկնաբուծական տնտեսություններից հեռացվող ջուրը ռոռզման նպատակներով օգտագործման համակարգ, կամ ջրօգտագործման շրջանառության համակարգ:

բ) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեին, անհրաժեշտության դեպքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին.

- Մշակել Արարատյան հարթավայրում ստորերկրյա ջրերով ռոռզման համակարգը մակերևութային ջրերով փոխարինելու միջոցառումների ծրագիր և այն դնել կիրարկման մեջ:
- ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունների հետ մշակել ձկնաբուծական տնտեսությունների կողմից հեռացվող ջրերը ռոռզման նպատակով օգտագործելու հայեցակարգ, այն դնել կիրարկման մեջ, ինչի արդյունքում ստորերկրյա ջրերի արդյունահանումը կնվազի մոտ 2000լ/վրկ ծավալով, իսկ ոչ ռոռզման սեզոնին՝ կրկնակի անգամ:
- Համակարգի ինքնաշատրվանող խորքային հորերը բերել փականային ռեժիմի՝ չափագրելով և կապարակնքելով դրանք:
- Տեխնիկական վատ վիճակում գտնվող հորերը փականային ռեժիմի բերվելու անհնարինության դեպքում պարտադրել շահագործողներին հորերը կոնսերվացնել իրենց հաշվին:
- ՋՕԸ-երին տալ սահմանված կարգով ջրառի հաշվառում իրականացնելու և հաշվետվողականության պահանջների պարտադիր կատարման հանձնարարականներ:
- Հստակեցնել ռոռզման նպատակով ջրառի նորմատիվ պահանջները:
- Ջրօգտագործվող ինքնաշատրվանող խորքային հորերը սահմանված կարգով բերել փականային ռեժիմի:
- Ապահովել ջրառի ծավալների հաշվառումը, խմելու-քաղցրահամ ջուրն օգտագործել բացառապես այդ նպատակով:
- Բացառել կոյուղաջրերի արտահոսքը գյուղատնտեսական հողեր:
- Մշակել ջրակորուստների կանխարգելմանն ուղղված միջոցառումների ծրագիր, օրենքով սահմանված կարգով այն համաձայնեցնել ՀՀ բնապահպանության նախարարության հետ և իրականացնել ծրագիրը:

զ) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը.

- ՀՀ Արարատի մարզի 141 ինքնաշատրվանող հոր օգտագործող 13 գյուղական համայնքների կարիքների համար մշակել կենտրոնացված ջրամատարարարման համակարգ:
- Կարիքների գնահատումից և ցանցի ստեղծումից հետո համայնքների բյուջեի հաշվին կոնսերվացնել կամ լիկվիդացնել ավելորդ (չշահագործվող) հորերը:

դ) ՀՀ կառավարության Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնին.

- ՀՀ օրենքով սահմանված կարգով կազմակերպել համալիր վերահսկողություն՝ Արարատյան արտեզյան ավազանից ջրառ իրականացնող, ձկնային տնտեսություններում, ջրօգտագործող ընկերություններում և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում:
- Վերահսկողության արդյունքների վերլուծություններից հետո մշակել ոլորտում առկա խնդիրների Բարելավմանն ուղղված միջոցառումներ և առաջարկի տեսքով դրանք ուղղել ըստ պատկան մարմինների:

ե) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին.

- վերանայել տնտեսվարող սուբյեկտների համար սահմանված ջրի մատակարարման սակագները:

5. ՀՀ Անվտանգության խորհրդին առաջարկել.

- Քննության առարկա դարձնել Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրի մակարդակի նվազման ազդեցությունը՝

- անապատացման և դրանից բխող ռիսկերը

- Հայկական ատոմային էլեկտրակայանի անվտանգության ռիսկերը

- պարենային անվտանգության ռիսկերը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Հ.Նառատյան

Ջ.Հովհաննիսյան

Ի.Ջառախյան